ՀՀ 2027ԹՎԱԿԱՆԻ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

Պետական մարմինը՝ *ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

Հայտի հաստատման ամսաթիվը՝

1. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

ՄԺԾԾ ժամանակահատվածում Արդարադատության նախարարության գործունեությունն ուղղված է լինելու Հայաստանի Հանրապետության կառավարության նոր ծրագրով և գործունեության միջոցառումների ծրագրով Արդարադատության նախարարության մասով սահմանված առաջնահերթությունների և ուղղությունների իրականացմանը: Բացի այդ, հիմք են ընդունվելու նաև նոր մշակվող Արդարադատության ոլորտի բարեփոխումների ռազմավարությամբ սահմանված առաջնահերթությունները, որը մեկտեղելու է նախկինում տարբեր ռազմավարական փաստաթղթերով սահմանված գերակայություններն ու ուղղությունները: Միևնույն ժամանակ, առաջնահերթ ուղղությունների սահմանումը պայմանավորվելու է նաև նոր Սահմանադրության մշակմամբ և ընդունմամբ, որով կարող են առաջ քաշվել օրակարգային նոր հրամայականներ:

Քանի որ վերոնշյալ ռազմավարական փաստաթղթերը դեռևս մշակված չեն, կներկայացվեն պլանավորված գերակայություններ, որոնք նախատեսվում են որպես առաջնահերթություններ վերոնշյալ ռազմավարական փաստաթղթերով, որոնց ուղղությամբ իրականացվելու են հիմնական միջոցառումները:

Այսպես, նախատեսվում է շարունակել դատական համակարգի բարեփոխումներին ուղղված գործողությունների իրականացումը, ներառյալ՝ դատական համակարգի անկախության ամրապնդմանը, ինքնակառավարման կայացմանը և ինստիտուցիոնալ զարգացմանը ուղղված միջոցառումները: Այս համատեքստում կարևոր է լինելու նաև դատարանների շենքային պայմանների բարելավման, դատավորների արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային և նյութատեխնիկական միջոցների ապահովման գործողությունների շարունակականությունը:

Շարունակվելու են նաև դատավարական բարեփոխումները, որոնց գերակա նպատակն է լինելու ապահովել մատչելի, արդյունավետ և ողջամիտ ժամկետներում գործերի քննությունը: Մասնավորապես, շարունակական են լինելու քաղաքացիական և վարչական դատավարությունների ոլորտներում առկա խնդիրները վեր հանումը, որոնց հիման վրա մշակվելու են անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ: Առանձնակի շեշտադրում է արվելու վարչական արդարադատության արդյունավետության բարձրացման ուղղությամբ, որի շրջանակում դիտարկվելու են Վարչական դատավարության օրենսգրքի կառուցակարգային վերանայումը, ինչպես նաև վարչական ակտերի բողոքարկման նոր կառուցակարգերի սահմանումը, որը կապահովի նման բողոքների արագ և արդյունավետ քննությունը:

Դատավարական բարեփոխումների համատեքստում կարևոր դերակատարում է ունենալու նաև էլեկտրոնային արդարադատության ոլորտի բարեփոխումների շրջանակում նախատեսված միջոցառումների իրականացումը, հատկապես, միասնական էլեկտրոնային դատարան համակարգի ներդրումը:

Վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացումը նույնպես շարունակելու է մնալ որպես առաջնահերթություն, որի ուղղությամբ շարունակական է լինելու 2023թ. ստեղծված նոր՝ Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի գործունեության ապահովումը, այդ թվում՝ շենքային պայմանները և տեխնիկական ապահովումը, ներառյալ՝ գործերի էլեկտրոնային կառավարման համակարգի սպասարկումն ու անհրաժեշտ լավարկումը, այլ անհրաժեշտ վճարները և ծախսերը: Նշվածից բացի, հաշտարարության ոլորտում ապահովվելու է ընտանեկան գործերից բացի նաև աշխատանքային վեճերով նախատեսված պարտադիր

հաշտարարության ինստիտուտի ներդնումը, հաշտարարների մասնագիտական կարողությունների շարունակական զարգացումը:

Առանձնակի ուշադրություն է դարձվելու նաև ինստիտուցիոնալ իրավական բարեփոխումներին վերաբերող հարցերին, որոնց շրջանակում բարելավվելու են իրավունքի առանձին ինստիտուտներին առնչվող հարաբերությունները: Նշվածի շրջանակում կարևորվելու է նաև կորպորատիվ օրենսդրության բարելավումը, որի համատեքստում մշակվելու է առևտրային իրավաբանական անձանց գործունեությունը կարգավորող միասնական օրենսդրություն, ինչպես նաև գործելու է նոր օրենսդրությանը հարմարեցված թվային համակարգ:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագիրը ավարտվել է 2025 թվականին, սակայն միջոցառումների շարունակականությունն ապահովվում է, զուգահեռաբար մշակվում է Արդարադատության ոլորտի ռազմավարությունը, որով մարդու իրավունքների պաշտպանությունը նախատեսվում է ունենալ որպես առանձին գերակայություն:

Նոր ռազմավարական փաստաթղթով, Փոխվարչապետի գրասենյակ ներկայացված վերլուծություններին համահունչ, անհրաժեշտություն է ոչ միայն տվյալահեն և համակարգային մոտեցումների ամրապնդումը, այլև նոր և փոխկապակցված մարտահրավերների հասցեագրումը: Դրանք ներառում են անվտանգության միջավայրի փոփոխությամբ պայմանավորված մարդու իրավունքների հարցերը, տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության համապարփակ ապահովումը, հանրային միջավայրում ատելության խոսքի տարածման կանխարգելումը, գործարար միջավայրում մարդու իրավունքների պաշտպանության զարգացող օրակարգը, անձնական տվյալների և թվային իրավունքների հետ կապված նոր ռիսկերը, ինչպես նաև արհեստական բանականության կիրառման համատեքստում մարդու իրավունքների պաշտպանության հարցերը:

Այդպիսով՝ նոր ռազմավարության շրջանակներում ապահովվելու է.

- մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում իրավակիրառների, այդ թվում՝ քննիչների, դատախազների և դատավորների վերապատրաստումները,
- իրազեկման լայնածավալ աշխատանքների իրականացումը,
- խոշտանգումներից տուժած անձանց հոգեբանական աջակցության տրամադրումը՝ համապատասխան կազմակերպության ներգրավմամբ,
- անձնական տվյալների պաշտպանության ոլորտում նոր՝ ինքնավար կարգավիճակով լիազոր մարմնի ձևավորումը, որը նաև պահանջվում է ՀՀ-ԵՄ վիզաների ազատականացման գործողությունների ծրագրով, և որի ստեղծման հայեցակարգը քննարկվել և համաձայնեցվել է Վարչապետի ղեկավարմամբ իրականացված քննարկման շրջանակներում՝ վերահաստատելով ֆինանսական միջոցների հատկացման անհրաժեշտությունը,
- երեխաների և այլ խոցելի խմբերի իրավունքների պաշտպանությանն ուղղված աշխատանքները և Անչափահասների արդարադատության խորհրդի գործունեությունը,
- խտրականության և ատելության խոսքի դեմ պայքարը, այդ թվում՝ հանրային մարմիններում պրակտիկայի ուսումնասիրությունը և փոփոխությունը,
- մարդու իրավունքների և գործարար միջավայրի, մարդու իրավունքների և արհեստական բանականության ոլորտում հարաբերությունների կարգավորումը:

Կառավարությունն իր ոլորտային քաղաքականության առաջնահերթություններից է շարունակում համարել կոռուպցիայի դեմ պայքարը: Կառավարության 2026 թվականի հունվարի 8-ի N 16-Լ որոշման 99-րդ կետով **կոռուպցիայի դեմ պայքարը և թափանցիկությունը** սահմանվել է որպես առանձին ծրագիր: Վերջինիս նպատակն է

ամրապնդել ՀՀ հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգը՝ ձևավորելով կանխարգելման, հակազդման և բարեվարքության վրա հիմնված արդյունավետ և վստահելի կառավարման միջավայր: Ծրագիրը նպատակ ունի ամրապնդելու հակակոռուպցիոն մարմինների ինստիտուցիոնալ կարողությունները, բարձրացնելու հանրային վստահության մակարդակը և ապահովելու բարեվարքության սկզբունքների տարածումը պետական կառավարման բոլոր մակարդակներում: Ծրագիրը բաղկացած է երեք ենթածրագրից, որոնք իրենց հերթին տրոհվում են առանձին գործողությունների:

Կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 252-Լ որոշման համաձայն՝ հակակոռուպցիոն քաղաքականությանն առնչվող գործողությունները ներառվելու են Արդարադատության ոլորտի բարեփոխումների ռազմավարության մեջ: Բացի այդ՝ Արդարադատության ոլորտի բարեփոխումների ռազմավարությունից կարող է բխել հակակոռուպցիոն ոլորտի ռազմավարական ծրագիրը:

2027-2029թթ. հակակոռուպցիոն քաղաքականության իրականացմանն ուղղված ռազմավարական ծրագրի նպատակներն են՝ հանրային և մասնավոր հատվածներում կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված շարունակական գործողությունների իրականացումը, 2019-2022թթ. հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակում ձևավորված հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի մարմինների շարունակական կատարելագործումը, այդ մարմիններին նոր գործիքակազմով ապահովելը, կարողությունների զարգացումը, հանրային իրազեկումը: Նշյալի շրջանակում առանցքային ուղենիշներ են՝

- ✓ օրենդրական փոփոխությունները
- ✓ էլեկտրոնային նոր գործիքների ներդնումը
- ✓ անհրաժեշտության դեպքում՝ նոր ռեեստրների ստեղծումը
- ✓ հանրային և մասնավոր ոլորտներում բարեվարքության համակարգի տարրերի վերաբերյալ պարբերաբար վերապատրաստումները, իրազեկումները:

Քրեական արդարադատության ոլորտում բարեփոխումների շարունակությունն ապահովելու նպատակով հաշվի առնելով Քրեական և Քրեական դատավարության նոր օրենսգրքերի կիրառման ընթացքում բացահայտված հարցերը իրականացվելու են դրանց վերաբերյալ իրավապահ մարմինների և դատարավորների համար վերապատրաստման դասընթացներ, ուղղված նաև կալանք խափանման միջոցի կիրառման հիմնախնդիրներին:

Միջազգային փաստաթղթերով ամրագրված պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով կատարված ուսումնասիրության հիման վրա վերանայվելու է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը՝ վերացնելով հանցանք կատարած իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու գործընթացում առկա խոչընդոտները:

Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտում իրավիճակը բարելավելու, ինչպես նաև ոլորտի շարունակական զարգացումն ապահովելու համար պետք է թիրախավորվեն հետևյալ առանցքային նպատակները՝ միջազգային չափանիշներին համահունչ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության մեխանիզմների կատարելագործումը, դատապարտյալների և պրոբացիայի շահառուների վերականգման և վերասոցիալականացման ապահովմանն ուղղված միջոցառումների մշակումը, ազատությունից զրկված անձանց պահման պայմանների բարելավումը, քրեակատարողական հիմնարկների օպտիմալացումն ու արդիականացումը, քրեակատարողական ծառայության և քրեակատարողական հիմնարկների կառավարման մոդելի կատարելագործումը, պրոբացիայի ծառայության գործունեության արդյունավետության բարձրացումը, ծառայությունների կադրային քաղաքականության կատարելագործումը:

Հաշվի առնելով պրոբացիայի ոլորտում մատնանշված հիմնախնդիրները՝ նախատեսվում է շարունակել բարեփոխումների իրականացմանն ուղղված գործողությունները, այդ թվում՝ պրոբացիայի ծառայության գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով ոլորտային օրենսդրության համապարփակ վերանայումը, պրոբացիայի շահառուների վերասոցիալականացմանն ուղղված թիրախավորված նոր ծրագրերի ներդրում և դրանց արդյունավետության գնահատման միասնական մեթոդաբանության մշակումը, պրոբացիայի ծառայությանն էլեկտրոնային հսկողության համար անհրաժեշտ միջոցներով զինումը:

Շարունակվելու են նաև քրեակատարողական ոլորտում բարեփոխումների իրականացմանն ուղղված գործողությունները, ներառյալ՝ քրեակատարողական հիմնարկների շենքային պայմանների բարելավումը, քրեակատարողական հիմնարկները ժամանակակից տեսադիտման համակարգերով վերազինումը, ինժեներատեխնիկական միջոցների արդիականացումը, քրեակատարողական հիմնարկների պարագծի անվտանգության ապահովման մոդելի վերանայումը, տրանսպորտային միջոցների ձեռքբերումը, ազատությունից զրկված անձանց և զբաղվածության ապահովումը, վերասոցիալականացման ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը, պատժի և վերահսկողության անհատական պլանավորումը:

Նկատի ունենալով քրեակատարողական ծառայության առջև դրված խնդիրները, իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը նախատեսվում է քրեակատարողական հիմնարկներում ստեղծել մահվան ինքնավնասման կանխարգելման հատուկ խցեր, բոլոր քրեակատարողական հիմնարկներում իրականացնել պահանջարկի վրա հիմնված մասնագիտական կրթական ծրագրերի, վերանայել քրեակատարողական ծառայողների ուսուցման ընթացակարգը, քրեակատարողական հիմնարկներում ակտիվացնել արտադրական գործունեությունը:

Արդարադատության նախարարության քաղաքականության նպատակների և թիրախների մասին տեղեկատվությունն ամփոփված է Հայտին կից Հավելված 3-ի Մաս 2-ում ներկայացված աղյուսակում:

2. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

ՄԺԾԾ ժամանակահատվածում ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացվող ծախսային գերակայությունները բխում են կառավարության ծրագրից, նախարարության ընդհանուր ռազմավարական նպատակներից:

Նախարարությունն առաջիկա տարիների համար առավել կարևորում է ծախսային հետևյալ գերակայությունները.

Նախարարության գործունեության արդյունավետության, նպատակա-ուղղվածության և բարձրացման, հանրությանը մատուցվող ծառայությունները բնակչության համար ավելի մատչելի դարձնելու նպատակով իրականացվող բարեփոխումների ֆինանսական ապահովում, հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի շարունակական զարգացում, կանխարգելման և բացահայտման մեխանիզմների կատարելագործում, հանրային իրազեկման ծրագրերի իրականացում.

Անձնական տվյալների պաշտպանության ոլորտում նոր՝ ինքնավար կարգավիճակով լիազոր մարմնի ձևավորում, խոշտանգումներից տուժած անձանց համար հոգեբանական ծառայությունների ապահովում, մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում տվյալահեն քաղաքականության ապահովում,

իրավակիրառների կարողությունների զարգացում, հանրային իրազեկվածության ապահովում և խտրական պրակտիկաների վերացում:

Քրեակատարողական համակարգի կատարելագործում, քրեակատարողական հիմնարկների օպտիմալացում և արդիականացում, արտաքին աշխարհի հետ կապի ամրապնդման, պահման պայմանների բարելավման.

ՄԺԾԾ ժամանակահատվածում արդարադատության բնագավառում իրականացվելիք ծախսերի առավել գերակա ուղղությունները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար՝ (ըստ գերակայությունների նվազման)	Հիմնավորումներ
Արդարադատության ոլորտում քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում, խորհրդատվության և մոնիտորինգի իրականացում	Արդարադատության ոլորտի ռազմավարական բարեփոխումներով սահմանված գերակայությունների իրականացում, ներառյալ՝ դատական համակարգի և վեճերի լուծման դատական և արտադատական եղանակների, մարդու իրավունքների պաշտպանության, հակակոռուպցիոն քաղաքակա-նության, քրեակատարողական և պրոբացիայի համակարգերի, ինստիտուցիոնալ իրավական բարեփոխումներին վերաբերող հարցերի համատեքստում: Կոռուպցիայի դեմ պայքարն ինստիտուցիոնալ հենքի վրա դնելու նպատակով կարևորվում է գործող կառուցակարգերի զարգացումը: Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի շարունակական զարգացում: «Էլեկտրոնային դատարան» և «Էլեկտրոնային արդարադատություն» միասնական կառավարման համակարգերի ստեղծում: Անձնական տվյալների պաշտպանության ոլորտում նոր՝ ինքնավար կարգավիճակով լիազոր մարմնի ձևավորում, խոշտանգումներից տուժած անձանց համար հոգեբանական ծառայությունների ապահովում, մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում վերլուծությունների, վերապատրաստումների իրականացում, խտրականության դեմ պայքարի օրենսդրությանը զուգահեռ իրազեկման աշխատանքների իրականացում և պրակտիկաների փոփոխություն:
Քրեակատարողական ծառայություններ	Քրեակատարողական հիմնարկների օպտիմալացում և արդիականացում, անվտանգության ապահովում, արտաքին աշխարհի հետ կապի ամրապնդում, արդի ինժիներատեխնիկական միջոցներով վերազինում, պահման պայմանների բարելավում, ազատությունից զրկված անձանց զբաղվածության ապահովում, պրոբացիայի խնդիրների լուծում: Ազատությունից զրկված անձանց իրավունքների անխոչընդոտ իրացում՝ պետք է շարունակական քայլեր ձեռնարկվեն ազատությունից զրկված անձանց հիմնական իրավունքների երաշխավորման, այդ թվում՝ արտաքին աշխարհի հետ կապի ամրապնդման, պահման պայմանների բարելավման, գործի՝ ողջամիտ

	ժամկետում քննության ապահովման նպատակով՝ դատական նիստերին, վարութային և այլ գործողությունների իրականացմանը ազատությունից զրկված անձանց մասնակցության ապահովման համար
Հարկադիր կատարման ծառայություններ	Կատարողական վարույթի արդյունավետությունը բարձրացում, առկա խնդիրները վերացնելու անհրաժեշտություն, դատական պաշտպանության իրավունքի անբաժանելի մաս հանդիսացող՝ դատական ակտերի կատարման իրավունքի, ինչպես նաև հարկադիր կատարման ենթակա այլ ակտերի հարկադիր կատարման կենսագործում
Դատական և հանրային պաշտպանություն	Անձանց իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքի տեսանկյունից առանցքային է հանրային պաշտպանության ինստիտուտի դերն ու նշանակությունը:Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է ապահովել ՀՀ դատարանների որոշումների հիման վրա դատական փորձաքննությունների կատարումը;
Իրավական իրազեկում և տեղեկատվության ապահովում	Ապահովել երկու օրվա ընթացքում իրավական ակտերի էլեկտրոնային հրատարակությունը, դատական ակտերի և հարակից փաստաթղթերի, Հայաստանի Հանրապետության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների և հանձնարարվող այլ առանցքային փաստաթղթերի թարգմանություններ
Արդարադատության համակարգի աշխատակիցների վերապատրաստում և հատուկ ուսուցում	Ապահովել դատավորների թեկնածուների հավակնորդների և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մեջ դատավորի կամ դատախազի պաշտոն զբաղեցնելու համար անհրաժեշտ հմտությունների ձևավորումը, մասնագիտական գիտելիքների ընդլայնումը, քրեակատարողական, պրոբացիայի և հարկադիր կատարումն ապահովող ծառայողների վերապատրաստում և հատուկ ուսուցում

3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՄԺԾԾ ժամանակահատվածում նախատեսվում է

- «**Արդարադատության ոլորտում քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում, խորհրդատվության և մոնիտորինգի իրականացում**» ծրագրի շրջանակներում իրականացնել թվով չորս միջոցառումներ

1. Արդարադատության ոլորտում քաղաքականության, խորհրդատվության, մոնիտորինգի, գնման և աջակցության իրականացում,
2. Անձնական տվյալների պաշտպանության իրականացում,
3. Աջակցություն օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոնի գործունեությանը,
4. ՀՀ արդարադատության նախարարության կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում
5. ՀՀ արդարադատության նախարարության շենքային պայմանների բարելավում

- «**Դատական և հանրային պաշտպանություն»** ծրագրի շրջանակներում իրականացնել թվով չորս միջոցառումներ

1. Հանրային պաշտպանության ծառայություններ,
2. Սնանկության գործերով կառավարչական ծառայությունների ձեռքբերում,
3. Փորձաքննությունների ծառայությունների տրամադրում,

4. Աջակցություն «Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի գործունեությանը

- «**Քրեակատարողական ծառայություններ»** ծրագրի շրջանակներում իրականացնել թվով ութ միջոցառումներ

1. Քրեակատարողական ծառայություններ,
2. Պրոբացիայի ծառայություններ,
3. Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթական ծրագրերի իրականացում,
4. ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում,
5. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում,
6. Քրեակատարողական հիմնարկների շենքային պայմանների բարելավում
7. Քրեակատարողական հիմնարկների օպտիմալացում, շենքային պայմանների բարելավում
8. Քրեակատարողական նոր հիմնարկի կառուցում և հետագա շահագործում

- «**Իրավական իրազեկում և տեղեկատվության ապահովում»** ծրագրի շրջանակներում իրականացնել թվով երեք միջոցառումներ

1. Հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայություններ,
2. Թարգմանչական ծառայություններ,
3. Արխիվային ծառայություններ:

- «**Արդարադատության համակարգի աշխատակիցների վերապատրաստում և հատուկ ուսուցում»** ծրագրի շրջանակներում իրականացնել թվով երկու միջոցառումներ

1. Հատուկ ծառայողների վերապատրաստում և հատուկ ուսուցում,
2. Դատավորների, դատախազների, դատավորների ու դատախազների թեկնածուների ցուցակում գտնվող անձանց, դատական ծառայողների, դատախազության աշխատակազմում ծառայողների, դատական կարգադրիչների վերապատրաստման և հատուկ ուսուցման ծառայություններ,

- «**Հարկադիր կատարման ծառայություններ»** ծրագրի շրջանակներում իրականացնել թվով երկու միջոցառումներ

1. Հարկադիր կատարման ծառայություններ,
2. Հարկադիր կատարման ծառայության տեխնիկական հագեցվածության բարելավում

3.1. Գոյություն ունեցող ծախսային պարտավորություններ և բազային բյուջեի գնահատում

1052.Քաղաքացիական կացության ակտերի գրանցում

«Քաղաքացիական կացության ակտերի գրանցում» ծրագրի շրջանակներում ապահովվել է քաղաքացիական կացության ակտերի գրանցման, տեղեկանքների տրամադրման, ակտային գրանցումների վերականգնման, ակտային գրանցումներում ուղղումների, փոփոխությունների կատարման համար համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացումը: Ծրագրի գծով բազային բյուջեն 2026 թվականին կազմել է 156,433.2 հազ. դրամ: «Տեղական ինքնակառավարման մասին» 2025թ. դեկտեմբերի 17-ի թիվ 518-Ն և «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2025 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 517-Ն օրենքների համաձայն գործակալության սպասարկման կենտրոններին վերապահված գործառույթներն իրականացնող համայնքային

ծառայողների հետ՝ արդարադատության նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկի և քաղաքացիական ծառայության նոր պաշտոնների անձնագրերի հաստատումից հետո առաջացած քաղաքացիական ծառայության նոր պաշտոններում արդարադատության նախարարի հրամանով, սահմանված սպասարկման կենտրոններում գործող հաստիքային միավորներին համապատասխան, կնքվելու են ժամկետային աշխատանքային պայմանագրեր «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով մինչև տվյալ պաշտոնի համար անցկացվող մրցույթի արդյունքով նշանակում կատարելը:

Վերոգրյալով պայմանավորված այս ծրագրով 2027 թվականից գումարներ չեն նախատեսվել:

1057.Արդարադատության ոլորտում քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում, խորհրդատվության և մոնիտորինգի իրականացում ծրագրի շրջանակներում համակարգվում է նախարարության կողմից իրականցվող միջոցառումներ, ապահովվում է արդարադատության ոլորտի ռազմավարական բարեփոխումներով սահմանված գերակայությունների իրականացումը:

«Արդարադատության ոլորտում քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում, խորհրդատվության և մոնիտորինգի իրականացում» ծրագրի շրջանակներում 2026 թվականին նախատեսվել է հինգ միջոցառում: Ծրագրի գծով 2027 թվականին բազային բյուջեն կազմում է նախատեսված է 2,934,163.00հազ. դրամ: 2027-2029թթ. ծրագրի գծով լրացուցիչ գումար նախատեսվել է հիմնականում աշխատանքի վարձատրության գծով, քանի որ ՀՀ վարչապետի 2025թ. դեկտեմբերի 30-ի թիվ 1230-Ա և 2026թ. հունվարի 29-ի թիվ 71-Ա որոշումների համաձայն նախարարության հաստիքային միավորների թիվն ավելացել է 99-ով:

Ծրագրի գծով լրացուցիչ գումար է նախատեսվել նաև անձնական տվյալների պաշտպանության անկախ լիազոր մարմնի ստեղծման և գործուբեության ապահովման նպատակով: «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված ՀՀ անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը՝ Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը, գործում է ՀՀ արդարադատության նախարարության կազմում՝ որպես առաձնացված ստորաբաժանում, ինչը հակասում է տվյալների պաշտպանության լիազոր մարմնի անկախության պահանջներին և չափանիշներին:

Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի անկախության պահանջները բխում են ՀՀ կողմից վավերացված «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» ԵԽ կոնվենցիայի, ԵՄ «Անձնական տվյալների մշակման ընդհանուր կանոնակարգի» դրույթներից, ինչպես նաև Օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերից:

Հաշվի առնելով միջազգայնորեն ընդունված չափանիշները, ինչպես նաև ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգավորումները՝ Արդարադատության նախարարության կողմից մշակվել է անձնական տվյալների պաշտպանության նոր լիազոր մարմնի ստեղծման հայեցակարգ, որն արժանացել է վարչապետի նախնական հավանությանը: Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի ստեղծման նախնական ֆինանսական գնահատականը կազմում է մոտ 338 մլն դրամ:

1093. Դատական և հանրային պաշտպանություն

Այս ծրագրի գծով միջոցներն ուղղվում են իրավունքի պաշտպանության հասանելիության և օբյեկտիվության ապահովմանը: Այս ծրագրի գծով իրականացվող միջոցառումներից են.

11001. «Հանրային պաշտպանության ծառայություններ» միջոցառման նպատակն է հանրային պաշտպանի գրասենյակի զարգացման և գործառույթների արդյունավետ

իրականացման պայմանների շարունակական բարելավումը՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և հաշվարկով տրամադրվող դրամական միջոցների շրջանակներում:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ պարբերության համաձայն՝ հանրային պաշտպանների գործունեության հետ կապված ծախսերը փոխհատուցվում են պետական բյուջեից, որոնք ներառում են հանրային պաշտպանների պաշտոնային դրույքաչափը և հանրային պաշտպանների գործունեության ապահովման հետ կապված այլ ծախսեր: 2023 թվականի ՀՕ-356-Ն օրենքի համաձայն հանրային պաշտպաններին փոխհատուցում է տրվում նաև արտաժամյա աշխատանքի դիմաց՝ հանրային պաշտպանների պաշտոնային դրույքաչափերի վճարման համար նախատեսված ընդհանուր գումարի տասնհինգ տոկոսի չափով: Միևնույն ժամանակ, Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից վարվող քրեական գործերի քանակի ավելացմամբ պայմանավորված 2027-2029թ. նախատեսվում է ավելացնել նախատեսվում է հանրային պաշտապանների թիվը և միջոցառման գծով ծախսը ավելացնել համապատասխանաբար ըստ տարիների՝ 639,874.5 հազ. դրամով, 912,762.3 հազ. դրամով և 1,242,109.5 1 հազ. դրամով:

11002. «Սնանկության գործերով կառավարչական ծառայությունների ձեռքբերում» միջոցառման շրջանակներում անվճարունակության գործերով կառավարիչներին իրենց մատուցած ծառայությունների դիմաց օրենսդրությամբ («Սնանկության մասին» ՀՀ օրենքի 30 հոդվածի 8-րդ մասի պահանջներին համապատասխան) նախատեսված օժանդակության և փոխհատուցումների նպատակով 2027-2029թթ. նախատեսվում է 100,000.0 հազ. դրամ գումար՝ հիմք ընդունելով 2024-2025թթ. փաստացի փոխհատուցումների քանակը և գումարը:

Փորձաքննությունների անցկացման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով և Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքով: Դրանցով սահմանված է ինչպես փորձաքննությունների նշանակման և անցկացման կարգը, այնպես էլ փորձաքննությունների կատարման ընթացքում կրած ծախսերի հատուցման կարգը: Համաձայն վերոնշյալ իրավական ակտերի՝ քրեական դատավարության և վարչական վարույթների շրջանակներում պաշտոնատար անձանց որոշումների հիման վրա նշանակված փորձաքննությունների իրականացման հետ կապված ծախսերի հատուցումները կատարվում են ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին (հիմք՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մաս, Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 93-րդ հոդվածի 2-րդ մաս): Փորձագետին վճարված գումարը քրեական վարույթի շրջանակում ներառված է դատական, իսկ վարչական վարույթի շրջանակում վարչական վարույթի ծախսերի մեջ և ենթակա է հատուցման, ի կատարումն որի իրականացվում է «11003. Փորձաքննությունների ծառայությունների տրամադրում» միջոցառումը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 11.11.2021թ-ի N 1864-Ն «Յուրաքանչյուր մեկ առանձին օբյեկտի փորձաքննության միջին նորմատիվային ժամածախսը, փորձաքննության մեկ առանձին օբյեկտի գնահատման չափանիշները և դրա փորձաքննության արժեքն ըստ դատական փորձաքննությունների տեսակների և ենթատեսակների սահմանելու մասին» որոշմամբ, որն ուժի մեջ մտավ 15.11.2021թ-ից, փորձագիտական աշխատանքի մեկ ժամվա նախահաշվային արժեքը սահմանվեց 4500 ՀՀ դրամ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ փորձաքննությունների կատարման ծառայությունների մատուցվող ծավալը և կատարված հանցագործությունների և դրանց բացահայտումների քանակը գտնվում են ուղիղ համեմատական կախվածության մեջ՝

կարող ենք կանխատեսել, որ փորձաքննությունների քանակները 2027-2029 միջնաժամկետ հատվածում նույնպես կաճեն: Միջոցառման գծով նախատեսվում է տարեկան 866,043.0հազ. դրամ, որը 259,812.9 հազ. դրամով գերազանցում է 2026 թվականին նախատեսված գումարը:

11008. *«Աջակցություն «Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի գործունեությանը»* միջոցառման գծով գումարներն ուղղվում են Հայաստանում նոր արբիտրաժային կենտրոնի գործունեության համար անհրաժեշտ պայմանների, կենտրոնի աշխատակազմի աշխատավարձերի, անհրաժեշտ ծառայությունների համար վճարների, շենքային պայմանների, գրասենյակի պահման, կայքի մշակման, մարկետինգի, գործերի էլեկտրոնային կառավարման համակարգի և այլ անհրաժեշտ ծախսերի փոխհատուցմանը: 2027-2029թթ. միջոցառման գծով նախատեսվել է տարեկան 205,000.0հազ. դրամ:

1120. Քրեակատարողական ծառայություններ

«Քրեակատարողական ծառայություններ» ծրագրի միջոցներն ուղղվում են քրեակատարողական հիմնարկների օպտիմալացմանը և արդիականացմանը, արտաքին աշխարհի հետ կապի ամրապնդմանը, պահման պայմանների բարելավման, պրոբացիայի խնդիրների լուծմանը: «Քրեակատարողական ծառայություններ» ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումներն են.

11001. *«Քրեակատարողական ծառայություններ»* միջոցառումը ներառում է դատարանի նշանակած պատիժների կատարումը, քրեակատարողական հիմնարկների պահպանությունը, ազատությունից զրկելու ձևով պատիժ կրող դատապարտյալներին և կալանավորվածներին փոխադրումը և այլն: Կարևորվում է քրեակատարողական ծառայության կայուն գործունեության ամրապնդումը, որի շրջանակներում քրեակատարողական համակարգի բարեփոխումների շարունակական գործընթացում նախատեսվում են դատապարտյալների և կալանքի տակ գտնվող անձանց իրավունքների պաշտպանության, դատապարտյալների և կալանքի տակ գտնվող անձանց պահելու վայրերում պայմանների բարելավմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումների իրականացման խնդիրները:

Միջոցառման գծով 2026 թվականի պետական բյուջեի մասին օրենքով հատկացվել է 13,353,053.8 հազ. դրամ: 2027-2029թթ. այս միջոցառման գծով նախատեսվել է համապատասխանաբար 2027թ.՝ 15,508,133.20հազ.դրամ, 2028թ.՝ 14,801,854.50հազ. դրամ և 2029թ.՝ 14,9095,71.20հազ. դրամ: Նախորդ տարվա համեմատ լրացուցիչ գումարներ են նախատեսվել հիմնականում աշխատանքի վարձատրության գծով, ինչը պայմանավորված է քրեակատարողական հիմնարկներից կալանավորված անձանց (ինչպես որ դատապարտյալներին) դատարաններ, վարույթն իրականացնող այլ մարմինների գտնվելու, վարույթային գործողությունների և այլ վայրեր փոխադրելու (ուղեկցորդելու) և այդ վայրերում կալանավորված անձանց պահպանությունն ապահովելու գործառույթը ՀՀ ՆԳՆ ոստիկանությունից Քրեակատարողական ծառայությանը փոխանցելու հետ կապված 100 հաստիքային միավորի ավելացմամբ: Լրացուցիչ գումարներ են նախատեսվել նաև էներգետիկ ծառայությունների գծով, կենցաղային և հանրային սննդի ծառայությունների, շենքերի և կայուցների ընթացիկ նորոգման նպատակով:

2027-2029թթ. ընթացքում քրեակատարողական ծառայության հիմնական նպատակը շարունակելու է հանդիսանալ օրենքներով և միջազգային պայմանագրերով սահմանված խնդիրների ու ստանձնած պարտականությունների, անազատության մեջ պահվող անձանց պահման պայմանների բարելավմանն ուղղված միջոցառումների և վերականգնողական արդարադատության ներդրմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

Միաժամանակ, քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի ռազմավարություններով պայմանավորված քրեակատարողական ծառայության շենքերի կառուցման, կապիտալ վերանորոգման աշխատանքների իրականացման, տրանսպորտային, վարչական սարքավորումների և այլ մեքենաների ձեռքբերման նպատակով գումարներ են նախատեսվել 2027-2029թթ. համապատասխանաբար՝ 12,095,542.30հազ. դրամ, 10,872,000.00հազ. դրամ և 8,309,337.0 հազ. դրամ (կապիտալ ծախս):

11002. «Պրոբացիայի ծառայություններ» միջոցառման գծով նախատեսված միջոցներն ուղղվում են պրոբացիայի խնդիրների իրականացմանը: Պրոբացիայի ծառայության գործառույթներն առավել արդյունավետ իրականացնելու, ինչպես նաև ոլորտի շարունակական զարգացումն ապահովելու համար հիմնական նպատակը լինելու է՝

Քրեական վարույթի ընթացքում մեղադրյալի հնարավոր անօրինական վարքագծի կանխման ու դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունների կատարման ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը՝ այլընտրանքային խափանման միջոցների կիրառումն ապահովելու միջոցով, ինչպես նաև տնային կալանք խափանման միջոց կրող անձի մեկ վայրից մեկ այլ վայր տեղափոխելիս նրա ուղեկցումն ապահովելու միջոցով:

Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ դատական ակտով նշանակված պատժի և հարկադրանքի այլ միջոցների կատարման միջոցով սոցիալական արդարության վերականգնումը, պատժի ենթարկված անձի վերասոցիալականացումը, իսկ պրոբացիայի անչափահաս շահառուների նկատմամբ նաև նրա ֆիզիկական և հոգեկան բնականոն զարգացման ապահովումը, նրա դաստիարակումը և այլ անձի բացասական ազդեցությունից պաշտպանությունը:

Հասարակության անվտանգության ապահովումը՝ կրկնահանցագործության կանխարգելման և կրճատման միջոցով:

Պրոբացիայի շահառուին և տուժողին (տուժողի իրավահաջորդին) հաշտեցնելը:

Քրեական արդարադատության իրականացման աջակցությունը:

Նշված նպատակներին հասնելու համար առաջնահերթ է.

Ազատազրկման հետ չկապված պատիժների՝ տուգանքի, հանրային աշխատանքների, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու, ազատության սահմանափակման կատարումը, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելու կատարումն ապահովելու, պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, ինչպես նաև վերջիններիս հետ պատշաճ վերասոցիալականացման և վերականգնողական միջոցառումներ և ծրագրեր իրականացնելու համար անհրաժեշտ գործիքակազմերի տրամադրումը, բանիմաց և որակյալ մասնագետներով համալրումը և անընդհատ մասնագիտական վերապատրաստումների կազմակերպումը:

-Տնային կալանք և վարչական հսկողություն այլընտրանքային խափանման միջոցների կատարումն ապահովելու համար Պրոբացիայի ծառայությանն էլեկտրոնային հսկողության համար անհրաժեշտ միջոցներով զինում՝ այդ թվում էլեկտրոնային հսկողության սարքավորումների ձեռքբերում:

-Պրոբացիայի շահառուների զբաղվածության, կրթության, վերասոցիալականացման ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացում, ռիսկերի և պահանջմունքների գործիքների կատարելագործում, պատժի և վերահսկողության անհատական պլանավորում.

-Պրոբացիայի ծառայողների մասնագիտական գիտելիքների, աշխատանքային ունակությունների շարունակական կատարելագործում, սոցիալական պայմանների բարելավում.

-Թափանցիկության ապահովման և կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացում, քրեական ենթամշակույթի նկատմամբ զրո հանդուրժողականության ցուցաբերում:

-Պրոբացիայի ծառայողների աշխատանքային պայմանների բարելավում:

Այս միջոցառման գծով 2027-2029թթ. լրացուցիչ նախատեսվել է մոտ 50 մլն դրամ, որն աշխատանքի վարձատրության գծով է, քանի որ 2026 թվականին 130 հաստիքային միավորի ավելացմամբ պայմանավորված աշխատավարձի համար Ծառայությանը ամբողջ գումարը չի հատկացվել: Պրոբացիայի ծառայության պահպանման և տեխնիկական հագեցվածության նպատակով 2027-2029թթ. նախատեսվել է համապատասխանաբար 2,114,142.5 հազ. դրամ, 2,141,195.7 հազ. դրամ և 2,141,689.4 հազ. դրամ:

11005. «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթական ծրագրերի իրականացում» միջոցառման հիմնական նպատակն է ուսուցողական ծրագրերի և գեղագիտական դաստիարակության ծրագրի միջոցով իրավախախտում կատարած անձանց վերասոցիալականացման գործընթացին նպաստելը ինչպես քրեակատարողական հիմնարկներում, այնպես էլ հիմնարկներից դուրս: Կարևորվում է նաև վերասոցիալականացման ուղղությամբ միջոցառումների և դասընթացների իրականացումը հատկապես օրենքի հետ խնդիր ունեցող բոլոր երեխաների համար: Հիմնական նպատակ է նաև բոլոր պոտենցիալ շահառուների ներգրավումը կրթական ծրագրերի մեջ՝ ապահովելով նրանց կրթական իրավունքը: Խոսքը վերաբերվում է այն անձանց, որոնք հանրակրթական ծրագրերը թերի են անցել կամ լիարժեք հանրակրթական ծրագրեր չեն ուսումնասիրել: Միաժամանակ, կարևորվում է հատկապես դատապարտված ու այն անձանց մասնագիտական ուսուցումը, որոնց պատժաչափի կրման ժամանակահատվածը պետք է շուտով մարվի:

2027-2029թթ-ին նախատեսվում է ծրագրի միջոցառման իրականացմանն ուղղել տարեկան կտրվածքով 195140.2 հազ. դրամ:

1123. Իրավական իրազեկում և տեղեկատվության ապահովում

«Իրավական իրազեկում և տեղեկատվության ապահովում» ծրագրի գծով իրականացվում է երեք միջոցառում:

11001. «Հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայություններ» միջոցառման շրջանակներում ապահովվում է երկու օրվա ընթացքում իրավական ակտերի էլեկտրոնային հրատարակությունը («Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի պահանջով՝ 3. Նախարարությունը պարտավոր է երկու աշխատանքային օրվա ընթացքում ապահովել նորմատիվ իրավական ակտն ընդունած մարմնի կողմից՝ սահմանված կարգով ներկայացված նորմատիվ իրավական ակտերի միասնական կայքում հրապարակելը, ինչպես նաև նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական ինկորպորացիան:), պաշտոնական ինկորոպորացիաների աշխատանքները, ինչպես նաև Հայաստանի Իրավական Տեղեկատվության Համակարգի՝ «ԱՐԼԻՍ» (ՀԻՏՀ) կայքի պահպանումը, կառավարումը և սպասարկումը: Այս նպատակով նախատեսվում է 376,656.0հազ. դրամ:

Միջոցառման գծով 2,135.5 հազ. դրամը նախատեսվում է պոլիգրաֆիական արտադրանքի ձեռքբերման: Ընդհանուր միջոցառման գծով 2027-2029թթ. նախատեսվում է 378,791.5հազ. դրամ:

11002. «Թարգմանչական ծառայություններ» միջոցառումն ապահովում է ՀՀ, ԵՏՄ, ԵՄ իրավական ակտերի, ՀՀ ազգային զեկույցների, ՀՀ պետական մարմինների կողմից միջազգային կառույցներ ներկայացվող և այդ կառույցների կողմից ՀՀ մարմիններ ներկայացվող փաստաթղթերի, այլ պետությունների հետ Հայաստանի Հանրապետության երկկողմ հարաբերությունների շրջանակներում դատական ակտերի և հարակից փաստաթղթերի, Հայաստանի Հանրապետության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների և հանձնարարվող այլ առանցքային փաստաթղթերի թարգմանությունների կատարումն ու ժամանակին ներկայացումը շահառու մարմիններին՝ երկրի ընդհանուր տնտեսական և սոցիալական խնդիրների և նպատակների իրականացմանն աջակցելու և միջազգային պարտավորությունները պատշաճ կատարելու համար: Միաժամանակ, թարգմանությունների բարձր որակի ապահովումը խստագույնս կարևորվում է նաև պաշտոնական թարգմանությունների դեպքում: Միջոցառման շրջանակներում տարեկան նախատեսվում է ապահովել 24540 ջի թարգմանություն: 2027-2029թթ. միջոցառման գծով նախատեսվում է 250,339հազ. դրամ:

11003. «Արխիվային ծառայություններ» միջոցառման գծով նախատեսված միջոցներն ուղղվում են արխիվային հավաքածուի պահպանության ապահովմանը, համալրմանը, հաշվառմանը, թվայնացմանը, հանրահռչակմանը, հանրության կողմից արխիվային նյութերի օգտագործման ապահովմանը: ՄԺԾԾ ժամանակահատվածում Հայաստանի ազգային արխիվի հիմնական նպատակն ու թիրախը շարունակում է մնալ Հայաստանի Հանրապետության արխիվային (ներառյալ կինոֆոտոֆոնո) հավաքածուի պահպանման, թվայնացման, օգտագործման և հանրահռչակման, գիտական ուսումնասիրություններ, տեղական և միջազգային մակարդակներում Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի ճանաչելիության և սերունդներին փոխանցման անընդհատության ապահովումը, որը համահունչ է ՀՀ կառավարության ծրագրին և իրենից ներկայացնում է շարունակական գործընթաց:

Միջոցառման գծով 2027-2029թթ. նախատեսվել է տարեկան համապատասխանաբար 722,739.6հազ. դրամ, 781,085.3հազ. դրամ և 753,682.3հազ. դրամ:

1149. Արդարադատության համակարգի աշխատակիցների վերապատրաստում և հատուկ ուսուցում

2027-2029 թվականների ՄԺԾԾ ժամանակահատվածում ծրագրի *«11001.Հատուկ ծառայողների վերապատրաստում և հատուկ ուսուցում»* միջոցառման շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարությունը, հանդիսանալով քրեակատարողական, պրոբացիայի և հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների ոլորտում ՀՀ կառավարության քաղաքականության մշակման և իրականացման համար պատասխանատու պետական լիազորված մարմին, կարևորում է ինչպես վերապատրաստման ու հատուկ ուսուցման շարունակական ապահովումը, այնպես էլ այդ ոլորտում հատուկ մասնագիտացված և փորձ կուտակած կազմակերպության միջոցով որակյալ կրթություն ապահովելու հանգամանքը:

2027-2029թթ. ծրագրի գծով 2026 թվականի համեմատ լրացուցիչ գումարներ չեն նախատեսվել:

1182. Հարկադիր կատարման ծառայություններ

11001. «Հարկադիր կատարման ենթակա ակտերի կատարումն ապահովող ծառայություններ» միջոցառումն ապահովում է Հայաստանի Հանրապետության դատարանների, միջնորդ դատարանների և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում օտարերկրյա դատարանների և միջնորդ դատարանների դատավճիռների և վճիռների հիման վրա տրված կատարողական թերթի, ինչպես նաև վարչական ակտերով պահանջների կատարումը և կատարողական

վարույթի կողմերի և նրանց օրինական ներկայացուցիչների օրինական շահերի պաշտպանությունը: 2027թվականին ծրագրի գծով նախատեսվել է 3,869,970.1 հազ. դրամ, 2028թ.՝ 4,021,550.7հազ. դրամ և 2029թ.՝ 4,077,968.6 հազ. դրամ:

3.2. Նոր նախաձեռնություններ

Դատավորների համար հավասար և պատշաճ աշխատանքային պայմաններ ապահովելու նպատակ հետապնդելով՝ Համաշխարհային բանկի հետ համագործակցությամբ իրականացվել է դատարանների շենքերի նախնական ուսումնասիրություն և խնդիրների գույքագրում, որպես երկարաժամկետ ծրագիր Էկոնոմիկայի նախարարության Հանրային ներդրումային կոմիտե է ներկայացվել ներդրումային ծրագրի հայտ, որը ներառում է՝ շենքերի մանրամասն գույքագրում, դատարանների տեղակայվածության նոր՝ առավել արդյունավետ քարտեզի որոշում, դատարանների ստանդարտների մշակում, ըստ նոր նորմատիվ ստանդարտների՝ ՀՀ դատարանների շենքերի վերակառուցում:Ըստ այդմ՝ ՄԺԾԾ-ում ներառելու նպատակով ներկայացվում է նոր ծրագիր, որը նախատեսված է իրականացնել 5 տարում՝ 2027-2031 թթ., և որի ընդհանուր արժեքը կազմում է մոտ 18,481.8 մլն ՀՀ դրամ: Նախագիծն նախատեսվում է իրականացնել Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ՝ վարկային ծրագրի միջոցով: Նշյալ մոտեցումը հիմնված է նախ՝ արդարադատության ոլորտի, ներառյալ դատարանների և ՏՀՏ ենթակառուցվածքների բարեփոխումներին աջակցելու Համաշխարհային բանկի բազմամյա փորձի, շարունակական տեխնիկական աջակցության և առանձին ներդրումների շնորհիվ Հայաստանի դատական համակարգում տիրող իրավիճակին քաջատեղյակ լինելու, ապա և՝ ոլորտում առկա պետական կարողությունների ու ռեսուրսների սահմանափակ լինելու վրա: Նշյալ հիմնախնդիրների հաղթահարման տեսանկյունից արդարադատության ոլորտի համար անգնահատելի և անհրաժեշտ կլինի Համաշխարհային բանկի փորձի և կայուն վերջնարդյունքներ ապահովելու բազմիցս փորձված մոտեցման և ներգրավվածության ապահովումը:

Անկախ օգտագործողի գտնվելու վայրից ՀՀ ողջ տարածքում արդարադատության իրականացման միասնական պայմաններ ապահովելու նպատակով՝ նախագծով առաջարկվում է.

1. Մշակել դատարանների շենքերի միասնական ստանդարտներ /ճարտարապետաշինարարական նորմեր, դատարանի տիպային մոդել, դատարանների շենքերի արդյունավետ քարտեզ/,
2. Ստեղծել անխափան և անվտանգ միջավայր դատական տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) ենթակառուցվածքների ստանդարտացման համար,
3. Իրականացնել դատարանների նախագծման ժամանակակից չափանիշներին համապատասխանող շենքերի վերա/կառուցման ուղղությամբ թիրախային ներդրումներ:

Նախագծի իրականացումը կլուծի հետևյալ խնդիրները.

- դատարանների անհավասար շենքային պայմաններ
- որակյալ կադրերի անհավասար բաշխվածություն
- դատական գործընթացների անհարկի ձգձգումներ՝ ՏՀՏ խափանումների պատճառով
- հաշմանդամություն ունեցող անձանց համար առկա խոչընդոտներ
- վտանգավոր աշխատանքային պայմաններ
- խոնավության, հրդեհի վտանգի տակ գտնվող արխիվներ
- շենքերի պահպանման ծախսարդյունավետ կառուցակարգի բացակայություն:

Վերոնշյալ խնդիրների լուծումը կհանգեցնի դատարանների շենքերում՝ տեղում շոշափելի փոփոխությունների, մատչելիության, արդյունավետության և թափանցիկության բարելավմանը:Ծրագրի միջոցով դատական ենթակառուցվածքների արդիականացումն ու ստանդարտացումը օգուտ կբերի դատական համակարգին՝ շուրջ 314 դատավորի և թվով 2616 աշխատակազմի ներկայացուցիչների, ինչպես նաև ընդհանուր առմամբ արդարադատության ոլորտի շահառուներին՝ արդարադատություն ստացող քաղաքացիներ և բիզնես, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, քննչական մարմիններ, դատախազություն, փաստաբաններ, սնանկության կառավարիչներ, նոտարներ և այլն:

Բացի վերոգրյալից, տարեկան 5,000.0 հազ. դրամ խոշտանգումից տուժած անձանց հոգեբանական օգնության տրամադրման նպատակով: Քաղաքացիական օրենսգրքի1087.3-րդ հոդվածով սահմանվում է, որ խոշտանգումից տուժած անձի ռեաբիլիտացիայի իրավունքը ներառում է բժշկական օգնության և սպասարկման դիմաց հատուցում ստանալու, ինչպես նաև անվճար հոգեբանական և անվճար իրավաբանական ծառայություններից օգտվելու իրավունքը: Հոգեբանական ծառայությունները տրամադրվում են խոշտանգման մասին ենթադրյալ տուժողի կողմից հայտարարություն ներկայացվելուց հետո ողջամիտ ժամկետում՝ հաշվի առնելով տուժողի իրավաչափ շահերը: Հոգեբանական ծառայությունները մատուցվում են ավանդական և այլընտրանքային միջամտության եղանակներով՝ հաշվի առնելով տուժողի անհատական կարիքները: Ըստ այդմ՝ ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 26-ի N 1367-Ն որոշմամբ սահմանվում է այդ ծառայություններից օգտվելու կարգը և պայմանները: Քանի որ ՄԻՊ ազգայի ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրից բխում էր աջակցության կենտրոնի ձևավորում, իրականացվել են ուսումնասիրություններ առկա գործիքակազմերի մասով, մշակվել է նշված որոշման մեջ փոփոխություն նախատեսող նախագիծ (https://www.e-draft.am/projects/9720), որով հստակեցվում են կառուցակարգերը, և որը ենթադրում է մասնավոր կազմակերպության հետ պայմանագրի կնքում՝ հոգեբանական ծառայությունների մատուցման նպատակով:

4. ՈՉ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Արդարադատության նախարարության ենթակայությամբ գործող պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից 2027-2029թթ. իրականացվելիք ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում սպասվող եկամուտների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Հավելված 6 –ում:

5. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունն իր լիազորությունների ներքո չի իրականացնում տարածքային զարգացմանն ուղղակիորեն առնչվող ծրագրեր:

6. ՄԻՋՈԼՈՐՏԱՅԻՆ (ԽԱՉՎՈՂ) ԲՆՈՒՅԹԻ ԱՌԱՆՁԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Միջոլորտային (խաչվող) բնույթի առանձին քաղաքականություններին առնչվող ծրագրեր/միջոցառումներ չեն ակնկալվում:

7. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՍՏԱՑՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

8. ՄԺԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

2027-2029թթ. ժամանակահատվածի համար Արդարադատության նախարարության պատասխանատվության ներքո գտնվող բնագավառ(ներ)ի գծով ֆինանսական պահանջների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացված է Հավելված 8 –ում:

9. ՀԱՅՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ